ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԺԵԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՈՒՇԵՐ

Հայաստանի Գրողների միության երկրորդ համագումարին նախապատրաստվում են առանձնահատուկ տագնապախառն աշխուժությամբ ու եռանդով. նշանակված զեկուցումները գրվում ու փոփոխվում են Խորհրդային Միության Կոմկուսի Կենտկոմի՝ օգոստոսին կայացրած որոշման համաձայն: Թերթերում տպագրված Անդրեյ Ժդանովի զեկուցումը Լենինգրադի կուսակազմակերպության ակտիվի նիստում՝ «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, ձեռքից ձեռք էն անցնում: Ժդանովը անողոք քննադատության է ենթարկում այն գրողներին, որոնք «խորհրդային գրականությունը քաշում են դեպի գաղափարազրկության, անսկզբունքայնության, ձևապաշտության, բուրժուական փտած, անկումային կուլտուրայի առջև ստորաքարշություն անողների ճահիճը»: Որպես «փտած, անկումային» գրականության ամենաաչքի ընկնող ներկայացուցիչների՝ նա ոչնչացնող կրակի տակ է առնում Աննա Ախմատովային ու Զոշչենկոյին: «Խորհրդային գրականությունն ու արվեստը,- շեշտում է Ժդանովը,- աշխարհում ամենաառաջատարն են և իրավունք ունեն կոմունիստական բարոյականություն ուսուցանել ուրիշ ժողովուրդներին...»: Կարդում ես ու դժվար է ասել՝ ինչ զգացում է համակում քեզ: Թերևս ամենից շատ ահաբեկության, վտանգի. մեզ մոտ՝ Հայաստանում, ևս կջանան մեր զոշչենկոներն ու ախմատովաները հայտնաբերել:

«Ինտուրիստ» հյուրանոցը լցվում է Մոսկվայից, միութենական հանրապետություններից ու սփյուռքից ժամանող հյուրերով:

Մարիա Պետրովիխը համարյա դուրս չի գնում մեր համարից: Ժամերով իրար ետևից ծխում է ու հուզված, այլայլված քայլում սենյակում: Այդ անիծված Եվգենովն անպայման ելույթ կունենա «Արա Գեղեցիկի» դեմ ու կտապալի թարգմանության գործը: Խցկել են նրան «Մոսկետսկի պիսատել»... Իրենց մարդն է, չէ՞: Մի խելքը գլխին քննադատ էլ լիներ... Գուցե պետք է Սերգեյ Բորոդինին զգուշացնել, որ պատրաստվի Եվգենովին հակահարված տալու: Եթե չհամաձայնի, թող մեկ ուրիշը՝ համարձակ, հեղինակություն վայելող գրողներից կամ գրաքննադատներից: Բայց ո՞վ, ո՞վ: Նաիրին ինչո՞ւ է ձեռքերը ծալած նստել, չի՞ հասկանում՝ գլխին ինչ պատուհաս կարող են բերել: Ա՛յ, Վերան էլ է ասում՝ Նաիրուն կխփեն:

- Մարիա՛, թանկագի՛նս, այդպես մի՛ տանջիր քեզ, ինչ լինելու է, կլինի, կանխել չես կարող,- Պետրովիխի տագնապներից ինքն էլ ակամա

լարված՝ փորձում է նրան հանգստացնել Նաիրին: - Արի՛ քեզ համար սուրճ եփենք, կխմե՞ս:

- Սո՞ւրճ...- Պետրովիխը ցրված, մշուշոտ հայացքով նայում է մեկ ինձ, մեկ Նաիրուն ու նոր ծխախոտ վառելով՝ հառաչում է,- ա՜խ, որքա՜ն անզոր ենք մենք, որքա՜ն անզոր:

Գրողների միության համագումարի ներկա եմ լինում առաջին անգամ: Օպերային թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր բացումից հետո նիստերը շարունակվում են ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում: Ամեն առավոտ Անյան ինձ սպասում է շքամուտքի առջև, որտեղ հավաքված հետաքրքրասերների բազմությունը ամբողջ օրը չի ցրվում՝ հուսալով որևէ կերպ հրավիրատոմս ձեռք բերել: Անյայի ու իմ հրավիրատոմսերը մշտական են, ներս ենք մտնում միասին (Նաիրին ինձնից անջատվում, գնում է ետնադռնով՝ նախագահության անդամների հետ): Ռաֆիկ Արամյանը, ըստ պայմանավորվածության, շուտ է գալիս ու մեզ համար ևս աթոռներ զբաղեցնում կենտրոնական շարքերում: Շունչներս դեռ տեղը չեկած՝ շտապում է հաղորդել, թե այդ նիստին ովքեր ինչ հարցի շուրջ են ելույթներ ունենալու: Ռաֆիկը նախապես ամեն բան գիտե, «հոտոտելով» մտնում, դուրս է գալիս ամեն ծակուծուկ, ում հետ ասես չի շփվում: Նրա հետաքրքրությունների շրջանակները շատ լայն են՝ Գրողների միությունից բացի Նկարիչների միություն, Ճարտարապետների միություն, Կոմպոզիտորների միություն: Ժամանակ է գտնում ամենուր ներկա լինել ժողովներին, հավաքույթներին, անկեղծորեն ապրել նրանց վերաբերող խնդիրներով, ծանոթանալ ու մտերմություն հաստատել առավել տաղանդավոր նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների և երաժիշտների հետ, հրճվել նրանց հաջողություններով, տխրել ձախողությամբ:

- Էսօր Սիլվային անդազահան կանեն,- մեր կողքին նստելով՝ խորհրդավոր շշնջում է նա:- Աղավնին թունդ ելույթ է պատրաստել: Վարսիկից խոսք դուրս քաշեցի, իմացա:

- Է՜, Ռաֆի՜կ,- թերահավատորեն ականջը նրանից հեռացնում է Անյան՝ քաջատեղյակ Ռաֆիկի վառ երևակայությանն ու ամեն ինչ չափազանցնելու, մինչև իսկ ոգևորությունից տուտ հորինելու և այդ ստին հետո ինքն էլ հավատալու հատկությանը:- Վարսիկի բերանից խո՞սք քաշել կլինի:

Դժբախտաբար Ռաֆիկն այս անգամ ճիշտ է դուրս գալիս: Աղավնին իսկապես ելույթ է ունենում և որպես Ախմատովայի ազդեցությունը կրող ցայտուն օրինակ բերում է Սիլվայի մի բանաստեղծությունը: Անյան ու ես անհանգստացած նայում ենք իրար: Մեկ, մեկուկես տարի առաջ Անյան գրադարանից վերցրեց ու Սիլվային տվեց ծանոթանալու Աննա Ախմատովայի և Ուոլտ Ուիտմենի ժողովածուները: Զուր է հիմա մեղավոր զգում ի-

րեն, դրանից ավելի ճիշտ բան անել չէր կարող: Ցավոք, Սիլվան գրքեր քիչ է կարդում և արագ է ընկնում կարդացածի ազդեցության տակ, բայց Աղավնու մեջբերած սիրային այդ բանաստեղծությունը, ինձ հայտնի է, գրել է Ախմատովային կարդալուց շատ առաջ: Կեցցե Սիլվան, ախմատովայական ուժի զգացումներ արտահայտելու օժտվածության համար:

Մտքերի փոխանակության ընթացքում դահլիճն անընդհատ ալեկոծվում է, անզուսպ ռեպլիկներ ուղղում ամբիոնից խոսողներին: Ինչպես և սպասվում էր, ժդանովյան որոշումները (հազիվ թե՝ անկեղծ համոզվածության) կրքեր են բորբոքում, վեճերի, կոպիտ ընդհարումների տեղիք տալիս: Ինքնապաշտպանության բնազդից դրդված, գուցեև ուրիշների աչքին օրթոդոքս երևալու մղումով՝ գրողներն ու գրաքննադատները անխնա, Ռաֆիկի ասած՝ գզում, անդազահան են անում իրար: Հատկապես ջախջախիչ քննադատության են ենթարկում արդի քնարական պոեզիան, մանավանդ երիտասարդ բանաստեղծներին. Գևորգ Էմինի «Նորք» հրաշալի ժողովածուն, Սիլվայի ոչ պակաս հիացմունք պատճառող «Օրերի հետը», Մարո Մարգարյանի գողտրիկ, քնքուշ բանաստեղծությունների մի մասը և այլն: «Արա Գեղեցիկի» մասին խոսում են հարևանցիորեն: Սեմյոն Վլադիմիրովիչ Եվգենովը, որից այնքան սարսափում էր Պետրովիխը, չեմ հիշում, ելույթ առհասարակ ունենո՞ւմ է, թե՞ ոչ, համենայն դեպս չի ասում այնպիսի բան, որ տպավորվի: «Արա Գեղեցիկի» փոխարեն կրակելու թիրախ են դարձնում Նաիրու «Դու ասացիր՝ չեմ հավատում, ի՞նչ անեմ, որ հավատաս» բանաստեղծությունը: Զարյանն այդ ո՞ւմ դեմ է բողոքում: Դա ամենևին էլ սիրային բանաստեղծություն չէ՝ իբր ուղղված մի կնոջ; դրա տակ թաքնված է քաղաքական լուրջ մեղադրանք՝ Խորհրդային իշխանության, մեր հարազատ կուսակցության ու նրա իմաստուն ղեկավարների հասցեին, որոնք, ըստ Զարյանի, կասկածամիտ են, չեն ուզում ըմբռնել մարդուն, կոմունիստ գրողին, իսկ նա կաշվից դուրս է գալիս՝ ապացուցելու իր նվիրվածությունն ու հավատարմությունը: Ի՞նչ են նշանակում, օրինակ, հետևյալ տողերը.

...Նվեր տված գրքի նման բաց է հոգիս քո առաջ,
Նայում ես լոկ ու չես կարդում, ի՞նչ անեմ, որ հավատաս:

Ընդհանրացնելու դեպքում ստացվում է՝ մեր խորհրդային իրականության մեջ մարդկանց նկատմամբ վստահություն, հավատ գոյություն չունեն: Ընկեր Անդրեյ Ժդանովը հենց այսպիսի երկիմաստ գործերն է համարում վնասակար, անկումային, քաղքենիական: Պատահական չէ, որ Նաիրի Զարյանն է խմբագրել Կապուտիկյանի, Էմինի և շատ ուրիշների նման անկումային տրամադրություններին տուրք տվող բանաստեղծությունների ժողովածուները՝ առանց անհրաժեշտ խմբագրումներ կատարելու դրանց մեջ:

Գրեթե բոլոր քննադատողները խոսում են նույն ոգով:

Նաիրին, այդ գիշեր մինչև լույս նստած, գրում է հաջորդ օրվա նիստի իր ելույթը, որն առանձնապես հոգուտ իրեն որևէ փոփոխություն չի առաջացնում համագումարի պատվիրակների շրջանում:

Մտքերի փոխանակությանը մասնակցում են և մյուս քննադատված գրողները՝ Էմինը, Միլվան, Մարոն: Միլվան իր ելույթում նուրբ ձևով խայթում է Աղավնուն՝ ասելով՝ ուրիշների սիրային քնարական տողերն է քննադատում, մինչդեռ ինքը նոր սկսել է ուշացած իր կանացիությունը երգել: Կարծեմ մոտավորապես այս միտքը: Աղավնին վիրավորանքը չհանդուրժեց: Ընդմիջմանը, զբոսասրահում եռ գալով վրեժխնդրությունից, հասարակության ներկայությամբ գռեհիկ հայհոյանքների մի ամբողջ հեղեղ թափեց Միլվայի գլխին: Միլվան կարողացավ զսպել իրեն, պատասխանել լոկ արհամարհական քմծիծաղով:

Նույնպիսի ոչ պակաս գռեհիկ, գրեթե կինոդոյական ընդհարում տեղի ունեցավ համագումարի դահլիճում՝ բեմի վրա, ռեժիսոր-դերասան Արմեն Գուլակյանի և գրականագետ-թատերագետ Սուրեն Հարությունյանի միջև: Երկար ժամանակ նրանց կռիվը չէր հաջողվում դադարեցնել. հավասարակշռությունը կորցրած՝ մերթ մեկը, մերթ մյուսը կառչում էր ամբոխից և, չնայած նախագահի՝ նույնիսկ դահլիճից դուրս հրավիրելու սպառնալիքին, շարունակում «զնտիր» լուտանքներ տեղալ:

Զբոսասրահում՝ աստիճանների գլխին, հանդիպում եմ Թամարա Դեմուրյանին, բարևում է ինձ ու խեթում խաղացկուն մի ժպիտով, որ նման է ձեռ առնելուն.

- Տեսնո՞ւմ եք, Ձեզ նվիրած բանաստեղծության պատճառով Նաիրուն ինչ օրն են գցում:

- Ի՞նձ նվիրած: Թամարա՛, ես էլ, Դուք էլ շատ լավ գիտենք՝ այդ բանաստեղծությունը Նաիրին գրել է Ձեր մասին:

- Մի՞թե,- մի պահ ասես շփոթվում է Դեմուրյանը և իսկույն էլի ժպտում: Ես էլ եմ ժպտում ներողամտորեն: Չնայած կանացի իր խորամանկ սեթևեթանքներին՝ Թամարան ինձ դուր է գալիս: Ես նրան երևի՝ ոչ: Վրաս նայում է այնպես, ասես Նաիրուն ինքը մեծահոգաբար զիջել է ինձ, որովհետև իրեն այնքան էլ պետք չէր, իսկ ես բանից անտեղյակ եմ և միամտորեն հավատացած, թե նրան նվաճել եմ իմ հմայքի ուժով: Թամարան խելացի, փորձված կին է, ինչպե՞ս կարող է շոյել իրեն այն մտքով, թե ուզած պահին Նաիրուն կարելի է ետ վերադարձնել կամ վերստին զիջել մեկ ուրիշին, որ նա մերժված է իրենից, բայց ոչ հիասթափված և նոր ընտրությունը կատարել է ճարահատյալ:

Գուցե ինձ է այդպես թվում, և ես սխալվո՞ւմ եմ, գուցե Թամարան իր թողած տպավորությունից շատ ավելի բարձր մարդ է: Դրանում համոզվելու համար պետք են լինում երկար տարիներ:

Նիստերի ընդմիջումներից մեկի ժամանակ Ռաֆիկն ինձ ծանոթացնում է Բեյրութից նոր հայրենադարձված արձակագիր Գրիգոր Քեշիշյանի հետ: Միջահասակ, լայներես, մսեղ այտերով երիտասարդ է, հայացքը՝ մեղմ, ուշադիր, բարի: Ահա մինչ այդ ինձ անհայտ պոտենցիալ մի բարեկամ ես: Չեմ կասկածում՝ մտերմանալու ենք, ընդմիշտ մնալու լավ ընկերներ: Որտեղի՞ց է այդ համոզվածությունը, սոսկ իմ ներըմբռնումի՞ց: Հետագայում՝ Նաիրու մահվանից հետո, երբ Սփյուռքի կոմիտեի մամուլի բաժնում աշխատանքի անցա, Գրիգորը (բաժնի վարիչը) խոստովանեց. այն օրերին, երկրորդ համագումարում հետս ծանոթանալիս, չգիտես ինչու, առաջին հայացքից ես իրեն թվացել էի Երևանում ապրող վաղուցվա բարեկամը: Եթե լինում է սեր՝ առաջին հայացքից, ինչո՞ւ չի կարող ծնվել նաև բարեկամություն՝ առաջին հայացքից: Ինքն ունի իր սրտի դավթարը՝ սև և սպիտակ ցուցակներով: Իմ անունը սկզբից ևեթ գրանցեց դավթարի սպիտակ ցուցակում: Հոգիդ լո՛ւյս դառնա, Գրիգո՛ր, իմ ծանր օրերին որքա՜ն օգնեցիր ինձ քո խորհուրդներով, տղամարդկային հավասարակշռված, սառը դատողությամբ, քանի անգամ կանխեցիր հուզմունքից խուճապի ենթակա իմ արարքները:

Ռաֆիկը գոհ է մնում մեր՝ միմյանց վրա թողած տպավորությունից, Քեշիշյանին նայում է այնպես, ասես իր գյուտն է, իր հայտնագործությունը: Տրամադրությունը համագումարի օրերին առհասարակ բարձրացել է. նոր ծանոթություններ հաստատելու լայն հնարավորություններ են ստեղծվել ռուս և այլազգի ներկայացուցիչ-հյուրերի հետ: Սփյուռքից ևս մի մեծ խումբ գրողներ են եկել, որոնց անունները մինչ այդ լսած չկայինք՝ Վահե Վահյան, Գառնիկ Ադդարյան, Գույումջյան, Միքալ, Սելյան... Ռաֆիկն իր տարերքի մեջ է, մարելով հետաքրքրասիրությունից՝ մոտենում, հարցուփորձ է անում նրանց՝ մեզ անծանոթ արտասահմանի կյանքից: Պատահական չէ, որ արագ մտերմացել է նաև հայրենադարձ երիտասարդ գրողների հետ: Ինձ թվում է՝ նրա մտքում արդեն այն ժամանակվանից խմորվում էին ապագա «Ռուբինյան եղբայրներ» վեպի առանձին դրվագներ:

- Ա՛նժ, վատ չի գրում, գիտե՞ս,- հովանավորի դեր ստանձնողի պես ձեռքը Քեշիշյանի ուսին դնելով՝ գորովալից ասում է նրա մասին Ռաֆիկը:- Բեյրութում տպագրված պատմվածքը կբերեմ, կկարդաս: Կտաս՝ Նաիրին էլ կարդա: Նաիրի Զարյանին մինչև այստեղ գալդ գիտեիր, չէ՞, Գրիգո՛ր:

Քեշիշյանը անորոշ ժպտում է՝ ուսը զգուշությամբ ազատելով Ռաֆիկի քրտնած ափից: Ճերմակ, կիսաթև վերնաշապիկով է, մեզ արտառոց նեղ թվացող տաբատով: Որքան էլ համեստ հագնված լինեն հայրենադարձները, անմիջապես տարբերվում են տեղացիներից, նույնիսկ փողոցով անցնելիս: Վայելուչ տեսք ունենալու մեր՝ հատկապես կանանց, ջանքերը, ըստ երևույթին, հաջողության չեն հասնում. շատ ենք հնաոճ ու ան-

ճաշակ երևում նրանց աչքին, ես այդ զգում եմ ներողամիտ հեգնանքով մեզ զննող հայացքներից:

- Զարյանին կարդացել եմ: «Աքիլլեսին Հոմերն երգեց...»:

- Չէ՛, չէ՛, դա չէ,- շտապով ընդհատում է Քեշիշյանին Ռաֆիկը՝ ստուգող մի հայացք նետելով ինձ. հո չեն բողոքի:- Խոսքս «Արայի» մասին է: Թե չունես, կտամ: Պա՛հ, այ գո՜ղծ: Բա ինքը, ի՛նքը... Պետք է մոտիկից ճանաչես, որ իմանաս՝ ինչ մարդ է: Անժ, համագումարը վերջանա, Գրիգորին կբերեմ ձեզ մոտ՝ հյուրանոց: Խոստացել եմ Դեմիրճյանենց տուն էլ տանել, տեսնի՝ բիձուկն ինչպես է ջութակ նվագում:

Ասես Ռաֆիկի ցանկությունը մասամբ իրագործելու նպատակով անսպասելի տեղի է ունենում մի փոքրիկ միջադեպ՝ երկու անվանի գրողների ներկայացում խիստ բնորոշ կողմերով:

Դահլիճում Գրիգորը նստում է մեզ հետ՝ միևնույն շարքում, Անյայի պահած աթոռներից մեկին: Միշտ չէ, որ ելույթները հետաքրքիր են: Ռաֆիկը սիրում է կատաղի «ճակատամարտեր»՝ ծանր «զոհերով», մանավանդ որ այդ զոհերի թվում ինքը չկա: Խոսողն այս անգամ չեզոք մի մարդ է, վեճերից հեռու: Օգտվելով այդ հանգամանքից՝ զրուցում ենք շշուկով, գլուխ գլխի: Ռաֆիկն ինչ-որ զվարճալի արկած է պատմում Քեշիշյանին՝ Ստեփան Զորյանի կյանքից:

- Լսե՛ք, լսե՛ք,- թփթփացնում է մեր թիկունքին Անյան:- Հովիկ Մելիքյանը Ռաֆիկի մասին է խոսում:

Ռաֆիկը ձգվում է տեղում, վերին շրթունքի ծայրն իսկույն հարցական թռչում է վեր: Ամբիոն բարձրացած «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի գլխավոր խմբագիրն, իրոք, կուրծք ծեծելով փորձում է արդարանալ: Ինքը Ռաֆայել Արամյանի արատավոր պատմվածքը՝ «Իմ քաղաքի ձայները», ամենևին մտադիր չէր տպագրել, ընկեր Դերենիկ Դեմիրճյանը միջամտեց, ասաց՝ հաջողված գործ է, ուրբանիստական...

Բեմում՝ նախագահության սեղանի մոտ նստած Դեմիրճյանը գունատվելով կտրականապես հերքում է՝ զայրույթից դողացող մագաղաթյա մատները թխկթխկացնելով սեղանին.

- Դը... դը... Դուք սխալվում եք, ընկե՛ր Մելիքյան, ես այդ-պիի՜սի բը... բան չեմ ասել:

Հովիկ Մելիքյանը մի պահ կարկամում է՝ շվարած հայացքը հառելով մերթ դահլիճ, մերթ նախագահության անդամներին, և արագ գտնում է իրեն.

- Ուրեմն հաշվի եմ առել Նաիրի Զարյանի դրական կարծիքը: Նա է ասել, որ տպեմ:

Նույնպես նախագահության անդամների միջև՝ երկրորդ շարքի ծայրում նստած Նաիրին, անակնկալի գալով, վեր է ցատկում աթոռից, ձեռքը տանում տրորելու դեմքը ու ետ քաշելով՝ բռունցք դարձրած թրատում է օդը:

- Այո՛, ես ասել եմ և պնդում եմ. այդ պատմվածքը արժանի էր տպագրության:

-Վա՜ա՜...- համակ զարմանք կտրած՝ Ռաֆիկը ետ է ընկնում նստարանի թիկնակին:- Էս ի՞նչ արեց, տո՜: «Իմ քաղաքի ձայները» Նաիրին չի էլ կարդացել, գիտե՞ք: Ես տվել էի ընկեր Դեմիրճյանին: